Disability Rights California

*Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ*

# Հաշմանդամության խտրականությանը վերաբերող ամփոփաթերթ. Կալիֆորնիայի նահանգային դատարաններից օգտվելը

***Փետրվար, 2018թ.,հրատ. #F113.10 - Armenian***

## Հաշմանդամության խտրականությանը վերաբերող դաշնային և նահանգային օրենքները

Դաշնային և նահանգային օրենքներն արգելում են հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը նահանգային դատարանների կողմից և պահանջում են, որ դատարանները հաշմանդամություն ունեցող մարդկանց պատշաճ հարմարեցումներ տրամադրեն, որոնց կարիքը նրանք ունեն՝ դատական համակարգին լիարժեք մասնակցություն համար: Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի (ADA, Americans with Disabilities Act) II վերնագիրն արգելում է նահանգային և տեղական պետական կազմակերպությունների, այդ թվում դատական համակարգի կողմից հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը: II վերնագիրը նաև պահանջում է, որ պետական կազմակերպությունները պատշաճ փոփոխություններ տրամադրեն

քաղաքականություններում և գործելակերպերում՝ երաշխավորելու, որ նրանք հավասարապես օգտվում են պետական ծառայություններից: Վերականգնողական ծառայությունների մասին օրենքի (Rehabilitation Act) 504 հոդվածը նմանատիպ պաշտպանության միջոցներ է տրամադրում խտրականությունից այն կազմակերպությունների կողմից, որոնք դաշնային ֆինանսական միջոցներ են ստանում: Կալիֆորնիայի Կառավարության օրենսգրքի (California Government Code) 11135 հոդվածն արգելում է նահանգային ֆինանսական միջոցներ ստացող բիզնեսի ներկայացուցիչների կողմից դրսևորված խտրականությունը:

## Հաշմանդամ անձանց շահերի ինքնապաշտպանություն

Ստորև հղումներ են տրամադրված ADA-ի տեղեկագրից՝ Կալիֆորնիայի դատարանների կայքէջերի վերաբերյալ՝

- http://www.courts.ca.gov/14362.htm
- http://www.courts.ca.gov/documents/access-fairness-QandA-forpersons-with-disabilities.pdf

Այս կայքէջը Ձեզ տրամադրում է այն անհրաժեշտ տեղեկությունները, որոնց կարիքն ունեք՝ դատարանից պատշաճ հարմարեցումներ խնդրելու համար: Այն նաև MC-410 ձևաթղթի հղում է ներառում՝ հարմարեցումներ խնդրելու համար՝ «ինչպես անել» տեսանյութի հետ միասին, որն անհարժեշտ է ձևաթուղթը լրացնելու համար:

Եթե դատարանը մերժի այն հարմարեցումները, որոնց կարիքն ունեք, Դուք վերանայման իրավունք եք ստանում: Քայլերը, որոնք Դուք կատարում եք, կախված են նրանից, թե ով է մերժել Ձեր խնդրանքը:

Եթե դատարանի ոչ իրավասու աշխատակիցը (քարտուղար կամ երդվյալ ատենակալների հանձնակատարը) մերժել է Ձեր խնդրանքը, Դուք կարող եք խնդրել դատական պաշտոնյային (դատավորի կամ դատարանի հանձնակատարին) վերանայել որոշումը: Դուք նաև

կարող եք դատական պաշտոնյային խնդրել վերանայել որոշումը, եթե կարծում եք, որ տրամադրված համարեցումները համապատասխան չեն: Դատական պաշտոնյան կնախագահի լսումը կամ դատավարությունը: Եթե լսման կամ դատավարության համար դեռ նշանակված դատավոր չկա, Դուք կարող եք դատարանի նախագահող դատավորին խնդրել վերանայել որոշումը: Ցանկացած դեպքում Դուք պետք է մերժման կամ համարեցման ծանուցման ամսաթվից սկսած 10 օրվա ընթացքում վերանայում խնդրեք:

Եթե դատական պաշտոնյան (դատավորը կամ դատարանի հանձնակատարը) մերժել են Ձեր խնդրանքը, Դուք կարող եք գերագույն դատարան իրավական պաշտպանության արտակարգ միջոցների համար միջնորդություն ներկայացնել: Դուք կարող եք նույն միջնորդությունը ներկայացնել, եթե կարծում եք, որ դատական պաշտոնյան Ձեզ անհամապատասխան համարեցումներ է տրամադրել: Ցանկացած դեպքում Դուք 10 օր ունեք՝ մերժման կամ համարեցումների ծանուցման ամսաթվից սկսած՝ միջնորդություն ներկայացնելու համար: Հնարավոր է, որ Դուք փաստաբանի կարիք ունենաք՝ այս միջնորդությունը ներկայացնելու համար:

Եթե կարծում եք, որ Ձեր հանդեպ խտրականություն է դրսևորվել, Դուք նաև կարող եք վարչական բողոք ներկայացնել ԱՄՆ Արդարադատության նախարարությանը (DOJ, Department of Justice)՝ դաշնային օրենքի ուժով կամ Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանների վարչությանը (DFEH, Department of Fair Employment and Housing)՝ նահանգային օրենքի ուժով: DOJ-ի բողոքները պետք է ներկայացվեն խտրական վերաբերմունքի դրսևորման ամսաթվից հետո 180 օրվա ընթացքում: DFEH-ի բողոքները պետք է ներկայացվեն խտրական վերաբերմունքի կատարման ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում:

## DOJ-ի և DFEH-ի կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև:

**DOJ բողոքներ՝**

U.S. Department of Justice

Civil Rights Division
950 Pennsylvania Avenue, N.W. Disability
Rights Section – 1425 NYAV
Washington, D.C. 20530
Առցանց ներկայացում՝ https://www.ada.gov/filing_complaint.htm
Հեռախոս՝ (800) 514-0301
TTY՝ (800) 514-0383

**DFEH բողոքներ՝**

Առցանց ներկայացում՝ https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/
Հեռախոս՝ (800) 884-1684, լսողության խնդիրներ ունեցող անձանց համար (TTY)՝ (800) 700-2320:
Փոստային հասցե. Զանգահարեք (800) 884-1684 հեռախոսահամարով և բողոքի համապատասխան ձևաթուղթ խնդրեք՝ տպելու և վերադարձնելու համար: Խնդրում ենք փոստային առաքման և մշակման համար ժամանակ տալ:

Դուք նույնպես ընտրանք ունեք բողոք ներկայացնելու դատավորի դեմ՝ Կալիֆորնիայի դատական գործունեության իրականացնող հանձնաժողովին, եթե կարծում եք, որ դատական հակիրավական վարքագիծ է դրսևորվել: Դատական գործունեության իրականացնող հանձնաժողովը չի կարող փոխել որևէ դատական պաշտոնյայի կողմից կայացված որոշում. Միայն դատարաններում վերանայում հայցելու դեպքում կարող է որոշումը փոխվել: Այստեղ հղում է տրված այն կայքէջին, որտեղից կարող եք հավելյալ տեղեկություններ ստանալ առ այն, թե ինչպես պետք է բողոք ներկայացնել՝ http://cjp.ca.gov/ :

Դուք նաև կարող եք օգտակար համարել խնդիրը դատարանի ADA համակարգողի ուշադրությանը կամ տվյալ դատարանի նախագահող դատավորի ուշադրությանը հրավիրելով: Դատարանների ADA համակարգողի կամ նախագահող դատավորի կոնտակտային տվյալների համար այցելեք՝ http://www.courts.ca.gov/find-my-court.htm

**Դատավարություն**

Օրենքի խախտման վերոնշյալ քննարկված դեպքերը նաև կարող են քննվել մասնավոր դատական գործի միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը սահմանափակում են դատավարություն ներկայացնելու ժամկետը, և որ Դուք կարող եք հավանաբար կորցնել զանգատարկման իրավունքը, եթե սահմանափակումներին վերաբերող կիրառելի օրենսդրական ակտերի շրջանակում չգործեք: Այս վերջնաժամկետները կարող են երկու տարուց կարճ լինել՝ սկսած խտրականության դրսևորման ամսաթվից:

Բացի այդ, կառավարության քաղաքացիական իրավախախտումների զանգատների մասին օրենքը պահանջում է, որ կառավարության քաղաքացիական իրավախախտումները ներկայացվեն խտրականության դեպքից հետո վեց ամսվա ընթացքում՝ նահանգային կամ տեղական պետական կազմակերպության դեմ դատական գործ հարուցելով՝ դրամական կորստի մասին: Քաղաքացիական իրավախախտումների վերաբերող՝ հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել՝ http://www.disabilityrightsca.org/pubs/522901.htm կայքում: Խնդրում ենք հաշվի առնել, որ այս կայքէջը հղում է՝ տրամադրում բողոքների դիմումների ձևաթղթերին՝ ընդդեմ նահանգային կամ նահանգային գործակալության կամ աշխատակցի, որը կարող է Ձեր գործին չվերաբերել: Դատարանը կարող է քաղաքացիական իրավախախտումների բողոքների իր սեփական ձևաթղթերն ունենալ, որոնք մատչելի են իր կայքէջում: Եթե Դուք որոշեք դատական հայց հարուցել, Դուք պետք է հնարավորինս շուտ փաստաբանի հետ խորհրդակցեք:

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [Կատարեք հարցումը] Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության խնդրանքի ձևաթուղթը: Մնացած բոլոր հարցերի դեպքում զանգահարեք՝ 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա). 213-213-8000 (հարավային Կալիֆորնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝* http://www.disabilityrightsca.org .